

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԿՓԲԸ-ԳՀԾՁԲ-2018/06**

ք. Երևան

« 27 » Մարտի 2018թ.

« Հատուկ կապ » ՓԲԸ, ի դեմս Ա.Տիգրանյան-ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լառուզտեխ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հարությունյան-ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով¹¹:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

¹¹ Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Հատուկ կապ» ՓԲԸ

0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4/129

ՀՎՀՀ 02509254

Արարատրանկ ԲԲԸ

Հ/Ը 1510043616640100

Տնօրեն՝ Ա.Տիգրանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Լառուզտեխ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 12., 7բն.,

ՀՎՀՀ 00447411


Կոնվերսանկ ՓԲԸ

Հ/Ը 1930067225680100

Տնօրեն՝ Ա. Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ.



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-6	50111130	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ			500000	1000000	1500000	2000000	2500000	3000000	3500000	4000000	4500000	5000000	50000000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հատուկ կապ» ՓԲԸ
 0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4/129
 ՀՎՀՀ 02509254
 Արարատքանկ ԲԲԸ
 Հ/Հ 1510043616640100
 Տնօրեն՝ Ա.Տիգրանյան

ԿԱՏԱՐՈՂ

«Լառուզտեխ» ՍՊԸ
 ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 12., 7բն.,
 ՀՎՀՀ 00447411
 Կոնվերսքանկ ՓԲԸ
 Հ/Հ 1930067225680100
 Տնօրեն՝ Ա. Հարությունյան



/ստորագրություն/
 Կ.Տ.



/ստորագրություն/
 Կ.Տ.

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

Պատվիրատու
 «Հատուկ Կապ» ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4/129
 հհ 1510043616640100
 հվհհ 02509254

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.
 Պայմանագրի համարը՝ ՀԿՓԲԸ-ԳՀԾՁԲ-2018/06
 Պատվիրատուն՝ ի դեմս Հատուկ կապ ՓԲԸ—ի տնօրեն Ա.Տիգրանյանի և
 Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի /
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հատուկ կապ ՓԲԸ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2018 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության				մատուցման	
		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	50111130	Վազ 2107 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թվականին	դրամ	5,000,000	1	Ք.Երևան, 1 Չարենցի 4/129	15/12/2018թ
2		Opel astra G մակնիշի ա/մ/1 հատ, արտադրված 1999թթ					
3		Daewoo Nexia մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թթ. սպիտակ					
4		Daewoo Nexia մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թթ. կապույտ					
5		Mercedes-BENZ C 200 մակնիշի ա/մ/1 հատ, արտադրված 1997թթ					
6		Դիսա-2955 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 1999թթ					

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

ՀՀ դրամ

h/h	SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափաբաժին					
		Վազ 2107 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թվականին	Opel vectra մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 1992 և 1995 թթ	Daewoo մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թթ.սպիտակ	Daewoo մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թթ.կապույտ	Mercedes-BENZ C 200 մակնիշի ա/մ/1 հատ, արտադրված 1997թթ	Դիսա-2955 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 1999թթ
1	2	3	4	5	6	7	8
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	Վազ 2107 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թվականին	Opel AstraG մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 1995 թթ.	Daewoo մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թթ. սպիտակ	Daewoo մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թթ.կապույտ	Mercedes-BENZ C 200 մակնիշի ա/մ/1 հատ, արտադրված 1997թթ	Դիսա-2955 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 1999թթ
1	Բռնկման համակարգի ստուգում	4000	3000	4000	4000	5000	6000
2	Կցորդման համակարգի ստուգում	4000	3000	4000	4000	5000	6000
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	6000	5000	5000	5000	6000	7000
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	6000	4000	4000	4000	5000	6000
5	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	4000	3000	3000	3000	4000	5000
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	Վազ 2107 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թվականին	Opel Astra G մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 1992 և 1995 թթ.	Daewoo մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թթ. սպիտակ	Daewoo մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թթ.կապույտ	Mercedes-BENZ C 200 մակնիշի ա/մ/1 հատ, արտադրված 1997թթ	Դիսա-2955 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 1999թթ
	1.Շարժիչ						
6	Շարժիչի հանում և տեղադրում	40000	40000	45000	45000	46000	47000
7	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	30000	40000	45000	45000	46000	48000
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	20000	25000	30000	30000	32000	33000
9	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	10000	15000	20000	20000	21000	23000
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	15000	10000	15000	15000	16000	17000
11	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և	3000	4000	5000	5000	6000	7000

	խտաբուկերով 1 կ-տ						
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	3000	6500	6500	6500	7500	8000
13	Շարժիչի փականների գսպանակների փոխարինում	3000	4000	4500	4500	5000	6000
14	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	2000	3000	4000	4000	5000	6000
15	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	2000	3000	4000	4000	5000	6000
16	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	4000	5000	5000	5000	6000	7000
17	Ծնկածև լիսեռի հղկում	2000	3000	4000	4000	5000	6000
18	Ծնկածև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	3000	4000	4000	4000	5000	7000
19	Ծնկածև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	3000	4000	4000	4000	5000	6500
20	Ծնկածև լիսեռի ատամնանիվի փոխարինում	3000	3500	4000	4000	5000	6000
21	Ծնկածև լիսեռի ուղղում	2000	3500	4000	4000	4500	6000
22	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	2000	2500	3500	3500	5000	7000
23	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	2000	2500	3500	3500	4500	6500
24	Շարժիչի բլեկի փոխարինում	7000	10500	11500	11500	13000	14500
25	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	6000	8000	9000	9000	10000	12000
26	Մխոցի փոխարինում 1 հատ	2000	4000	5000	5000	5500	7000
27	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	5000	5000	5000	6000	7000
28	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	4000	4000	4000	5000	6000
29	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	1500	2000	2000	2000	3500	4500
30	Փոկանիվի փոխարինում	2000	2500	2500	2500	4000	5000
31	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում		20000	20000	20000	22000	
32	Շարժիչի շղթայի փոխարինում	12000	15000	15000	15000	17000	18000
33	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	3000	4000	4000	4000	5000	6000
34	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	3000	4000	4000	4000	5000	6000
35	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	1500	2500	2500	2500	3500	5000
36	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	3000	4000	4000	4000	5000	6000
37	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	4000	5000	5000	5000	6000	7000
38	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	4000	5000	5000	5000	6000	7000
39	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	2000	2500	2500	2500	3000	4000
40	Յուղի ծորակի փոխարինում	1500	2000	2000	2000	2500	3500
41	Օդաքաշակ փողրակի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000

42	Բ/լիստեթի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000	4500	4500	4500	5500	6500
43	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	2000	4000	4000	4000	5000	6000
44	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	4000	4000	4000	5000	6000
45	Շարժիչի կափույրի փոխարինում	2000	3500	3500	3500	4500	5500
46	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	2000	3500	3500	3500	4500	5500
47	Շարժիչի շաքժաթևի փոխարինում 1 հատ	4000	5000	5000	5000	6000	7000
48	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	2000	3000	3000	3000	4000	5000
49	Շարժիչի բաշխիչ լիստեթի երիթակի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
50	Ատամնանիվի փոխարինում		4000	4000	4000	5000	6000
51	Ատամնանիվի փոկի փոխարինում		8000	8000	8000	9000	10000
52	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում		8000	8000	8000	9000	10000
53	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	3500	4000	4000	4000	5000	6500
54	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	2000	3500	3500	3500	4000	5500
55	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	2000	3500	3500	3500	4000	5500
56	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
57	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	3000	3500	3500	3500	4500	5000
58	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	2000	2500	2500	2500	3500	4500
59	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	2500	4000	4000	4000	5000	7000
60	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում		3000	3000	3000	5000	6000
61	Շարժիչի գամասեղի փոխարինում	3500	4000	4000	4000	5000	7000
62	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	5000	6500	6500	6500	7500	9000
63	Գլխիկի հեղույսի փոխարինում	2000	2000	2000	2000	4000	5000
64	Ծնկաձև լիստեթի հեղույսի փոխարինում	2000	2000	2000	2000	4000	5000
65	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	4000	4000	4000	4000	5000	6000
66	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	4000	4000	4000	4000	5000	6000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ							
67	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	1500	1500	1500	1500	3000	4000
68	Ավտոմեքենայի յուղում	2000	2500	2500	2500	3500	4500

69	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	3000	4000	4000	4000	5000	6000
70	Յուղի ռադիատորի փոխարինում	3000	4000	4000	4000	5000	6000
71	Յուղի ռադիատորի նորոգում	3000	4000	4000	4000	5000	6000
72	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	5000	7000	7000	7000	8000	9000
73	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	2500	3000	3000	3000	4000	5000
74	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	2500	3000	3000	3000	4000	5000
75	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
76	Օդի գտիչի փոխարինում	1000	1500	1500	1500	2000	3000
77	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	3500	3500	3500	4500	5500
78	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	3500	5000
79	Կարբյուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում			5000	5000	7000	
80	Կարբյուրատորի վերանորոգում			5000	5000	7000	
81	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	3000	5000	5000	5000		
82	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	6000	9000	9000	9000		
83	Բոցամուղի կողավորում	5000	7000	7000	7000		
84	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	3000	4000	4000	4000		
85	Բենզամղիչի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
86	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
87	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000	4500	4500	4500	5000	6000
88	Բռնկման կարգավորում	2000	3000	3000	3000	4000	5000
89	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	4000	4000	4000	5000	7000
90	Ղեկավարման բլոկի վերանորոգում	3000	4000	4000	4000	5000	7000
91	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000	6500	6500	6500	7500	8500
92	Վառելիքի բաքի մաքրում	3000	4000	4000	4000	5000	6000
93	Օդի ծախսի տվիչի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
94	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000	3000	3000	5000	7000
95	Տրամյորի վերանորոգում	2000	2500	2500	2500	4000	5000
96	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	2000	2500	2500	2500	4000	5000
97	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	2000	2500	2500	2500	4000	5000
98	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	4000	4500	4500	4500	5500	6500
99	Բենզոբաքի բենզոմղիչի	2000	3000	3000	3000	4000	5000

	ցանցի մաքրում						
100	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
101	Տվիչի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
3. Սառեցման և արտածման համակարգ							
102	Հովհարի փոխարինում	2000	3000	4000	4000	5000	7000
103	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	4000	4000	4000	5500	6500
104	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	1500	2000	2000	2000	4000	5000
105	Ռադիատորի նորոգում	4000	6500	6500	6500	7500	9000
106	Շերտափեղկի փոխարինում	2000	3000	3000	3000	4500	6000
107	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	2000	3000	3000	3000	4500	6000
108	Ընդարձակող բաքի փոխարինում	2000	3000	3000	3000	4500	6000
109	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	2000	3000	3000	3000	4500	6000
110	Զրի ծորակի փոխարինում	2000	3000	3000	3000	4500	6000
111	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	2000	3000	3000	3000	4500	6000
112	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	3000	3000	3000	4500	6000
113	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	8000	10500	10500	10500	12500	14000
114	Վառարանի ռադիատորի նորոգում	3000	4000	4000	4000	5000	6000
115	Վառարանի շարժիչի փոխարինում	3000	4000	4000	4000	5000	6000
116	Թերմոստատի փոխարինում	3000	4000	4000	4000	5000	6000
117	Զրի մղիչի փոխարինում միջադիրով	3000	4000	4000	4000	5000	6000
118	Զրի մղիչի միջադիրի փոխարինում	3000	4000	4000	4000	5000	6000
119	Գեներատորի փոկի փոխարինում	1500	2000	2000	2000	4000	5000
120	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	1500	2000	2000	2000	4000	5000
121	Զրի ռադիատորի վերանորոգում	3000	4000	4000	4000	5000	7000
122	Թերմոստատի միջադիրի փոխարինում	1000	1500	1500	1500	3000	4000
123	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000	1500	1500	1500	3000	4000
124	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	1000	1500	1500	1500	3000	4000
125	Խլարարի անուրի (xамыр) փոխարինում	1000	1500	1500	1500	3000	4000
126	Խլարարի ներդիրի փոխարինում	1000	1500	1500	1500	3000	4000
127	Խլարարի կախցի փոխարինում	2000	2500	2500	2500	3500	4500
128	Հովացման հեղուկի փոխարինում	1500	2000	2000	2000	3500	5000

4. Կցորդում և ՓՏ							
129	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
130	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	2000	2500	2500	2500	3500	4500
131	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	4000	6500	6500	6500	7500	9000
132	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	6500	6500	6500	7500	9000
133	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	4000	4000	4000	6000	7000
134	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	4000	4000	4000	6000	7000
135	Կցորդման երկծանիի փոխարինում	2000	4000	4000	4000	6000	7000
136	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	30000	35000	35000	35000	40000	50000
137	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	15000	25000	25000	25000	30000	35000
138	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	4000	5000	5000	5000	6000	7000
139	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	4000	4500	4500	4500	5000	7000
140	ՓՏ-ի հանում և տեղադրում	15000	20000	20000	20000	30000	40000
141	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	15000	20000	20000	20000	30000	40000
142	ՓՏ-ի պատյանի փոխարինում	4000	4000	4000	4000	5000	5000
143	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	4000	4000	4000	4000	5000	5000
144	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	4000	4000	4000	4000	5000	5000
145	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	4000	4000	4000	4000	5000	5000
146	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	4000	4000	4000	4000	5000	5000
147	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	3000	3500	3500	3500	5000	6500
148	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	2000	3500	3500	3500	5000	6500
149	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	3000	3500	3500	3500	5000	6500
150	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	2500	3500	3500	3500	5000	6500
151	ՓՏ-ի յուղի փոխարինում	2500	3500	3500	3500	5000	6500
152	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	2500	3500	3500	3500	5000	6500
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ							
153	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում,	9000	11500	11500	11500	12500	13500
154	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	7000	10000	10000	10000	11500	12500
155	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	7000	7500	8500	8500	9500	11500

156	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	4000	5000	5000	5000	6000	7000
157	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	4000	4500	4500	4500	5500	6000
158	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	4000	4500	4500	4500	5500	6000
159	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	4000	4500	4500	4500	5500	6000
160	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	4000	4500	4500	4500	5500	6000
161	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	4000	4500	4500	4500	5500	6000
162	Բաշխիչ տուփի երկժանի փոխարինում	4000	4500	4500	4500	5500	6000
163	Բաշխիչ տուփի բարձրի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
164	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
165	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
166	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
167	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	2500	4000	4000	4000	5000	6000
168	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2500	4000	4000	4000	5000	6000
169	Տվիչի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
170	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
171	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
6. Առջևի և հետևի կամրջակներ							
172	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	9000	9500	9500	9500	11000	12000
173	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	4000	5000	5000	5000	6000	7000
174	Առջևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	4000	5000	5000	5000	6000	7000
175	Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում	4000	5000	5000	5000	6000	7000
176	Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	2000	2500	2500	2500	3500	4500
177	Կամրջակի յուղի փոխարինում	1000	1000	1000	1000	3500	5000
178	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	3000	3000	3000	4000	5000
179	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում		4000	4000	4000		

180	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000				8000	
181	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	7000				10000	
182	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	7000				10000	
183	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	3000				4000	
184	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	2000				5000	
185	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000					
186	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	5000					
187	Հետևի կամրջակի բլրկավորման համակարգի նորոգում	5000					
188	Կամրջակի տվիչի փոխարինում	3500					
7. Կախոց							
189	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	14000	14500	14500	14500	16000	17000
190	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	4000	4000	4000	5000	6000
191	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	6000	5000	5000	5000	6000	7000
